

217H

206

362

U - 23

1898

362
4-23

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅ
'Ի ԿԻՊՐՈՍ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՌՍ ԶԻՆ ՇՐՋԱՆԻ

(1897 Մաս 48 — 1898 Մաս 4)



ԳԱԶԻՐԷ

Տպագրութիւն

ՍԱՐԳԻՍ ԳԱՐԲԻՆՆԱՆ

1898

2010

362
Q-23 6

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ

’Ի ԿԻՊՐՈՍ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՌՍ ԶԻՆ ՇՐՋԱՆԻ

(1897 Մարտ 18 — 1898 Մարտ 4)

1005
22448



ԳԱՀԻՐԷ

Տպագրութիւն

ՍԱՐԳԻՍ ԴԱՐՐԻՆԵԱՆ

1898

8787

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՅ 'Ի ԿԻՊՐՈՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի գիտութիւն բարեբաւաց եւ բարեկամաց ազգային հաստատութեանս, կը հրատարակեմք Որբանոցի Տեսչէն առ ինամակալութիւնս ուղղեալ առաջին Տեղեկագիրն զոր քննած եւ ըստ ամենայնի ստոյգ գտած եմք:

Հաստատութեանս սկզբնաւորութեան անցքեր արդէն ծանօթ են մեր ինն ամսով յառաջ հրատարակեալ Կանոնագրէն, յորմէ պիտի տեսնուի որ ինամակալութեանս բռնած դիրքն այս սիրոյ գործին մէջ՝ եղած է ապահովութեան մէջ ղենել Որբանոցն եւ կամաց կամաց յառաջ տանիլ զայն: Հարկաւ մեր աշխատութիւնք միայն այն ժամանակ եւ միայն այնքան կրնան օգտակար լինել երբ եւ որքան մեր ազգայինք իւրեանց առաստածնութիւն շարունակեն եւ առաւել եւս առասացնեն դեպ ի սոյն հաստատութիւն: Տեղեկագրոյս բարեսէր ընթերցողք պիտի տեսնեն որ նոյն իսկ այս միամեայ ժամանակին մէջ ակնկալուածէն աւելի արդիւնաբեր եղած է այն փոքրիկ դրամագլուխ որ մեր տնտեսութեան ներքոյ դրուած էր: Սակայն ինչքան դժուարութիւն կը կրենք նոյն իսկ այս փոքրիկ գումարը ձեռք բերելու որով կաշխատինք ներկայ ժամանակիս ամենակարեւոր պէտք մը լցուցանել:

Գալով Որբանոցի կառավարութեան՝ ինամակալութիւնս անդադար կը ընդունի Տեսչի եւ Տնօրէն Խորհրդոյն նեւ, կարելու խնդրոց մէջ հրահանգներ տարով եւ տեղեկութիւն տեսնալով: Ամիսն անգամ մը ինամակալութիւնս

2002

կը ժողովուրի եւ յարուցեալ խնդիրներ կը լուծէ եւ օգտակար որոշումներ կը տա:

Աւագ եւ՛ք որ հիմա Կիպրոսի մեջ Տնօրէն Խորհուրդ մը ունինք որ Ռբանոցի կանոնաւորապէս ընթանալու վրայ ի մօտ կը հսկէ եւ մեր գործն մեծապէս կը դիւրացնէ: Որեւէ մարդկային հաստատութիւն ասկէ աւելի կանոնաւոր եւ վստահութեան արժանի դիրքի մեջ չէր կրնար դրուիլ:

Այժմ կը մնայ բարեբարաց որ մեզ իւրեանց առասպողյն նուէրներովն աջակցին, որպէսզի այն հազարաւոր որբերէն որք տակաւին ապաստանարան մը գտած չեն՝ գէթ մի քանիսն եւս խլենք կորսեան ժանիքներէն եւ ապագայ հայ սերունդն ըստ կարի պահպանենք:

Մեր խորին շնորհակալութիւն յայտնելով Կրթարան—Ռբանոցիս բոլոր բարեբարաց եւ միանգամայն նոցա ամենեցուն որք բանիւ կամ գործով հաստատութեանս բարեկամ հանգիստացած են՝ ջերմապէս կը յանձնաւորենք նոցա Տեղեկալոյս ընթերցումն: Մասնաւոր շնորհակալութիւն պատշինք նաեւ Տնօրէն Խորհրդոյ Պատ. անդամոց որք մարդասիրաբար յանձն առած են Կրթարան—Ռբանոցիս ի մօտ հսկելու նոցր:

Մանչեսթը, 5 Մայիս 1898.

Խնամակալութիւն Ազգ. Կրթարան—Ռբանոցիին
որ ի Կիպրոս:

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա. ՇՐՋԱՆԻ



Արժ. Եսխագան եւ Մեծ. անդամք

Խնամակալութեան

Ազգային Կրթարան—Ռբանոցիին Կիպրոսի

Ի ՄԱՆՉԵՍՏԵՐ.

Տեղաբ.

Պատիւ ունիմք Ձեր նկատառութեան ներկայացնելու հաստատութեանս առաջին Տեղեկալերը, որ կը բովանդակէ 1897 Մարտ 18 — 1898 Մարտ 1 տեւող շրջանը:

ՎԱՀԱՆ ԳԵՐԻՐԵԱՅԱՆ

Տնօրէն.

12 Ապրիլ 1898,

ՆԻԿՈՍԻԱ (Կիպրոս).

ԲԱՅՈՒՄ

Կրթարան-Որբանոցին առաջին տարւան ծախուց գումարը հանդանակութեամբ պատրաստելու եւ յետոյ բացումը կատարելու համար 1896 Հոկտ. 22ին մեկնած էի Անգլիայէն՝ ի ձեռին ունենալով Լոնտոնի Մասնա-ժողովին յայտարարագիրը եւ ուրիշ յանձնարարական թղթեր : Հանդանակութեան գործին համար Ֆրանսայի եւ Եգիպտոսի մէջ երեք ամիսէ աւելի մնալու ստիպուած լինելով՝ 1897 Յունուարի վերջին օրն էր որ հասայ Կիպրոս : Այ տեղ մէկ ու կէս ամիս զբաղեցայ կարեւոր նախադասարասութիւններով եւ մասնաւորապէս՝ տեղական Տէօրէն Խորհուրդ մը կազմելու աշխատութեամբ : Գժրազգարար զանազան պատճառներ կը դիտարացնէին այդ մարմնոց վերջնական կազմակերպութիւնը, եւ որպէս զի գործն աւելի եւս չը յետաձգուի՝ Մարտ 18ին վարձեցի յատուկ բնակարան մը՝ սպասուած որը եւ թոշակաւոր աշակերտները բնդունելու համար : Ասոնք հետզհետէ հասան եւ Ապրիլ 18ին սկսաւ կանոնաւոր դաստիարակութիւնը : Սրժ. Գեւորդ յաճախայ Տէր Նահապետեան, որ այն մըջոցին այստեղ հաստատուած եւ Առաջնորդական փոխանորդ նշանակուած էր՝ իր աջակցութիւնը նուիրեց այս գործին :

Հաստատութեանս բացման հանդէսը, զոր կանխաւ արտօնած էր Պատ. Խնամակալութիւնը՝ կատարուեցաւ բաւական ուշ, այն է տարւոյս Փետրվ. ամսոյ 6ին : Ուրախ եմ յայտնելու թէ այս հանդէսը, որ միտ՝ գամայն սովիթ կ'ընծայէր տեղւոյս հայ գաղթականութեան ներկայացնելու մեր գործը՝ շատ նպաստաւոր տպաւորութիւն առաջ բերաւ : Կիպրոսի Կրթական Տեսուչ Գերաւմեճար Մը. Սընտըրը եւս, որ ներկայ էր, թէ՛ բերանացի

կերպով եւ թէ՛ գրաւորապէս մեծ գոհունակութիւն յայտնեց աշակերտաց բարեկրթութեան եւ յառաջդիմութեան մասին : Պատ. Թաղ. Խորհուրդն ալ, ինչպէս համակրանաց ձեռնարկեց մի հանդանակութեան, որու արդիւնքը կը տեսնուի նուիրաւորութեանց շարքին մէջ, եւ որ չէ փակուած տակտին :

ԲՆԱԿԱՐԱՆ

Քաղաքիս հայոց թաղին մէջ յարմար տեղ մը չը գտնուելուն համար, յունաց թաղին մէջ վարձուած էր առժամանակեայ տուն մը, տարեկան 18 սոկիով : Վեց ամիս վերջ, Որբանոցը փոխադրուեցաւ հիմակուան շէնքը, որ ունի բնդարձակ եւ ծառադարպ բախ եւ լուսաւոր տ. հովանուն սենեակներ : Այս շէնքն երբեմն կը ծառայէր իբր ստիկանութեան պաշտօնատուն՝ տարեկան 60 անգլ. սոկի վարձքով, յետոյ անգլիայոց ոց Բլիւզ՝ 45 սոկիով : Մենք կը վճարենք 30 սոկի վարձք : Տեղացի իրաւեկ ազգայինք կը հաստատեն որ Որբանոցիս յատուկ նպատակաշարմար շէնք մը կառուցանելու համար 300 սոկի բաւական պիտի լինի :

ՈՒՍԱՆՈՂՔ

Բացի Կիպրոսահայ երթեւեկներէ, ունինք 27 գիշերթիկներ. 15ը անթոշակ եւ 12ը թոշակաւոր : Ենթոշակներու 11ը սրբեր են եւ 4ը վկայեալ չ տուր ծնողաց զաւակներ : Այս վերջիններն բնդունելու հարկադրուած էինք՝ նկատելով իրենց ուղիմութիւնը եւ ուրիշ նպաստաւոր հանգամանքները : Այսու հանդերձ սոցա երկու քին համար կէս կէս թոշակ պիտի ստացուի

յառաջիկայ շրջանէն սկսեալ : Կանոնադրի տրամադրութեան համեմատ որբերու թիւը մինչեւ 20 պիտի հասցընենք հետզհետէ :

Տարւոյս ընթացքին մէջ Կրթարան—Որբանոցէս արձակուեցան երկու որբեր, մին՝ յառաջանալու անընդունակ դատուելուն եւ միւսը՝ ջգային հիւանդութեան մը ենթակայ գտնուելուն համար : Թէեւ ուսանողաց առողջական վիճակն առ հասարակ գոհացուցիչ կը գտնուի, բայց եւ այնպէս պատահած են հիւանդութեանց դէպքեր որոնք բժշկական այցելութեանց եւ խնամոց պէտք գոյացուցած են : Այս առթիւ խորին ջնդհակապէտք գոյացուցած են : Այս առթիւ խորին ջնդհակապէտք գոյացուցած են : Այս առթիւ խորին ջնդհակապէտք գոյացուցած են : Այս առթիւ խորին ջնդհակապէտք գոյացուցած են : Այս առթիւ խորին ջնդհակապէտք գոյացուցած են :

Մասնաւոր ուրախութեամբ կը յիշատակեմ որ ամբողջ տարեշրջանի մէջ ուսանողաց վարքն ու բարքը եւ կարգապահութիւնը գոհունակութեան արժանի գրուումը են :

Ոչնուազ գոհացուցիչ է անոնց հմտութեան աստիճանն ու մասնորական կարողութիւնն ալ, բազմաթիւ իրենց մուտքի ժամանակին հետ, եւ մանաւանդ նկատելով որ նոյեմբերի սկիզբէն ի վեր օրուան մէկ մասն արհեստական վարժութեանց յատկացուած է : Այժմ ունինք երեք դասարան, որոնց բարձրագոյնը կ'ընթացնեն հետեւեալ առարկաներով :

Հայերէն. — Տարրական քերականութիւն, ընթերցումն եւ բաշատրութիւն, ուղղագրութիւն, չարագրութիւն, աւսումն ի բերան ընտրեալ հաստատոյ :

Թուրքերէն. — Բնութեան հանդերձ բացատրութեամբ, գիր եւ ուղղագրութիւն :

Անգլիերէն. — Թարգմանութիւն, գիր, աւսումն ի բերան ընտրեալ հաստատոյ :

Կրօն. — Պատմութիւն հին կապարանի, տարրական գիտելիք Հայաստանեայց եկեղեցւոյ գաւառութեանց, կարգաց եւ խորհրդոյ մասին :

Իրագիտութիւն. — Երկիր, իր արտադրութիւն, տեսակք կենդանեաց, բուսոց եւ մետաղաց :

Աշխարհագրութիւն. — Ասիական եւ եւրոպական թուրքիա, Կիպրոս, բնահանութիւնը ծանօթութիւնը աշխարհի բնական մասանց վրայ :

Ազգ. Պատմութիւն. — Հայկազանց եւ Աբշակունեաց շրջաններու գլխաւոր դէպքերը :

Առողջապահութիւն. — Համառօտ գիտելիք Առողջապահութեան եւ մարդկային Բնախօսութեան վրայ :

Գեղագրութիւն. — Հայերէն, Թուրքերէն, եւ Անգլիերէն :

Գծագրութիւն. — Երկրաչափական ձևեր, կահեր, անօթներ, մարմնոց մասեր (ընդօրինակութեամբ) :

Երգեցողութիւն. — Եկեղեցական եւ մանկական երգեր :

Թուագիտութիւն. —

ԱՐՀԵՍԱԿԱՆ ՃԻՒՂ

Շարաթէ գառ ամեն օր արհեստական վարժութիւնը կ'սկսին ժամը 3ին (յետ միջօրէի) եւ կը տևեն 2 ժամ կամ աւելի : Աշակերտք երեք դասի բաժնուած կը հետևին կօշիկաւարութեան, գերձակութեան եւ աստղ-

ձագործութեան : Այս աշխատութիւններէն քիչ շատ օգուտ ալ քաղեցինք. աշակերտք իրենց կօշիկներու եւ զգեստուց պատրաստութեան մասին սկսան յաջողապէս օգնել իրենց վարպետներուն, եւ յոյս կայ որ քիչ ատենէ ըստական վարժ աղաքներ ունենանք : Ասաղձագործութիւնը միեւնոյն համեմատութեամբ արդիւնաւոր չեղաւ ցարդ, գլխաւորապէս այն պատճառաւ որ չուկայի մէջ վաճառելի կահեր պատրաստելու համար աւելի զրու մաղլոխ հարկ է :

Յիշեալ երեք արհեստներէն զատ՝ ունինք Շերամարուծութիւն ուսանող խումբ մը, մեր բարձրագոյն կարգի աշակերտներէն : Ասոնք որոշեալ ժամերու մէջ կը յաճախեն Կիպրոսի շերամարուծական վարժարանը, որ կը գտնուի ընդ անօրէնութեամբ Մեծ. Գ. Սալմասլեանի, ճարտարապետ—երկրագործ Մանրէլլէի համալսարանին : Տեսական գաստիսօսութեանց աւարտումէն յետոյ՝ աշակերտները մասնապէս ուսուցչի մը խնամոց ներքեւ գործնական վարժութիւններ ալ պիտի կատարեն եւ յետ քննութեան պիտի ստանան վարժարանին յատուկ վկայականը :

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սմէն Ս. Պատրիարքին նոյնպէս եւ Պատ. Խնամակալութեանդ հաղորդած էի արդէն այն դիմումները, զորս կատարած եմ մի տեղական վարչութիւն կազմելու համար : Գոհունակութեան արժանի է որ մեր Կանոնադրի 22րդ յօդուածի տրամադրութեան համաձայն՝ վերջապէս ունեցանք Տնօրէն Խորհուրդ մը, անդամակցութեամբ տեղացի երեք նշանաւոր ազգայնոց : Կիպրոսի Թաղական Խորհրդոյ Մեծ. Ատենապետն

թէ եւ կառավարական բարձր պաշտօնի մը զբաղումներով պաշարուած՝ հաճեցաւ, ըստ փափազի Պատ. Խնամակալութեանդ, ընդունիլ Տնօրէն Խորհրդոյ նախագահութիւնն, մինչեւ ցընարութիւնն նոր Ասաջնորդի : Այս առթիւ կը պարտիմ շնորհակալութիւն յայտնելու իմ հայրենակից այն ազնիւ պարոններուն, որոնք վերջերս կղզւոյն մէջ հաստատուած լինելով՝ իրրեւ ամսամասնակեայ վարչութեան անդամներ աշխատեցան եւ իրենց աջակցութիւնն ընծայեցին ինձ :

ԽԱՅՈՒՅ ՀԱՇԻՒՆՆԵՐԸ

Նորակազմ Տնօրէն Խորհուրդը նոր տարեշրջաւէն սկսած է ստանձնելու Կրթարան—Որբանոցի տնօրինական հսկողութիւնը, մատակարարութիւնը եւ ընթացիկ գործոց կարգադրութիւնը : Ուստի քանի որ ասաջին չըջանի ծախքերը կատարուած են իմ ձեռօք եւ կամ իմ անձնական պատասխանատուութեան ներքեւ՝ անոնց հաշիւը ներկայացուցի քաղաքիս Թաղական Խորհրդոյ քննութեանը : Շնորհակալ եմ որ Պատուարժան Խորհուրդը երեք զիշեր յատուկ նիստ ըրաւ եւ հաստատութեան տոմարները քննելէ յետոյ՝ միամեայ հաշուեկշիւը վաւերացուց պաշտօնապէս : Ըստ այդ հաշուեկշիւին, որու վաւերացեալ մի օրինակը Պատ. Խնամակալութեանդ ուղարկած եմ արդէն՝ 1897 Մարտ 18—1898 Մարտ 1 չըջանին մէջ Որբանոցի համար ծախսած է 60,809 $\frac{1}{2}$ դրոշ կիպրական, որ է 334 անգլիական ոսկի, 2 չիլին եւ 4 ու կէս բէնի : Այս գումարի մէջ նշանակուած չեն այն ծախքերը, զորս կատարած եմ Լոնտօնի Կիպրոս ուղեւորելուս եւ վերադառնալուս եւ հանդանակութեան համար Ֆրանսայի եւ Եգիպտոսի

մէջ մնալու առթիւ : Չը հաշուելով այդ բացառիկ ծախսը, նոյնպէս վերոնշանակեալ 334 ոսկիէն զեղջելով կան կարասեայ, պատրաստ պաշարի, արհեստական ու զգոյշական առարկաներու եւ այլ մի քանի բացառիկ ծախսերու գումարը, — մօտաւորապէս 59 ոսկի — կը մնայ 275 ոսկի ծախսը, միջին հաշուով 22 աշակերտի հաշար, որ է աշակերտի գլուխ 12 1/2 անգլ. ոսկի :

Յաւ. կը յայտնեմ որ հաստատութեանս այս առաջին շրջանին մէջ կիպրոս կղզին կը տառապի արտաքոյ կարգի թանդութեամբ, եւ մեր ուսեռտի ծախսեց գումարն ալ ենթադրուածէն աւելի բարձր եղաւ : Այս մասին կարելի եղած ուրիշ խնայողութիւններն ի գործ դնելով հանդերձ՝ նոյեմբերէն ի վեր Որբանոցին մէջ շինել տուած ենք փուռ մը, ուր պէտք եղած հացը չուկայէն աւելի աման գնով կը պատրաստուի : Երբեմն հայադորձ վարպետ մը օրականով կաշխատէր այս գործին. հիմա՛լ առանց վարձքի կը պատրաստուի հացը, աշխատութեամբ աշակերտայ ոյրոնց ունեւ ըստական վարժուեցան այս արհեստին : Որբանոցի վտարիկ բանջարանոյն ալ քիչ չափ օգտակար եղաւ իր արտադրութիւններով :

Յուսովի է որ գները մինչեւ յառաջիկայ Օգոստոս իւնիս սոխորեան աստիճանը իջնեն եւ Տնօրէն Խորհրդոյ Եւջմամբ խնայողութեան նոր միջոցներ ալ գտնելով՝ մեր երկրորդ տարեշրջանի մէջ համեմատապէս նուազ ծախս տեսնանք :

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

ՈՒՍԷՐՈՏԱՆԵ ԺԱՄ

6	—	6. 30	Զարթնում եւ յուսցում :
6. 30	—	7. 30	Սերտողութիւն :
7. 30	—	7. 45	Նախաճաշ :
7. 45	—	8	Առաւօտեան աղօթք եւ բարոյաւսութիւն :
8	—	9. 30	Դասախօսութիւնք :
9. 30	—	9. 45	Հանգիստ :
9. 45	—	12	Դասախօսութիւնք :

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԺԱՄ

12	—	1. 30	Ճաշ եւ զրօսանք :
1. 30	—	3	Դասախօսութիւնք :
3	—	5	Արհեստական վարժութիւնք :
5	—	6	Զրօսանք :
6	—	7	Ընթերթ եւ հանգիստ :
7	—	8	Սերտողութիւն :
8	—	9	Հանգիստ :
9	—		Ննջել :

Երեքշաբթի օրերը մէկ ժամ յատկացուած է աշակերտաց իրերաքննութեան : Շաբաթ օրերը մէկ ժամ՝ հրապարակային ընթերցման եւ արտասանական վարժութեան :

Շաբաթ օրերը ժամը 3էն վերջ կը դադրին աշխատութիւնք :

Կիրակի եւ առաջ օրերն աշակերտք առտուն կ'առաջնորդուին Ս. Եկեղեցի. կէսօրէն յետոյ՝ բնականապէս սլոտայի կ'ելլեն քաղաքէն դուրս :

ՀԱՆՈՒՆԿՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ

ԿՈՒՏԵ

ԱՆԳԼ. ՈՍԿԻՆ 182 ՂՐՈՒՇԷՆ

(1897 Մարտ 18 — 1898 Փետրուար 28)

ԵՂԵ

ԱՆԳԼ. ՈՍԿԻՆ 182 ՂՐՈՒՇԷՆ

	ՂՐՈՒՇ	ՓՐԼ.	ՂՐՈՒՇ	ՓՐԼ.		ՂՐՈՒՇ	ՓՐԼ.	ՂՐՈՒՇ	ՓՐԼ.
ՆՊԱՍՏՆԵՐԷ					ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁՔ			4.694	—
ԼՈՆՏՈՆԻ ազգայիններէն ստացուած	7.826	—			ԿԱՇԿԱՐԱՍԻՔ				
ԲԱՐՈՋԻ » » »	9.360	—			Մանակալներ, անկողիններ, եւ ցնշարանի այլ պէտքեր	4.276			
ԳԱՆԻՐԷԻ » » »	12.157	—			Գրասեղաններ, նստարաններ եւ ուսումնարանի կաններ	1.572			
ԱՂԵՔԱՍՆԴՐԻՈՅ » » »	1.530	—			Սեղանասան սպասներ, խոհանոցի ափսոսներ	1.451		7.299	—
ԲԱՐԻՋԻ Կեդրոնական միութենէն	3.600	—			ՋԳԵՍՏԵՂԷՆՔ				
ՄԱՐՍԷԼԻՆ ազգայիններէն ստացուած	3.312	—			Համագրեւս եւ պամպլէտակներ	1.478	10		
ՆԻԿՈՍԻՈՅ մէջ անգլիացի Օր. Բալէն	182	—			ձեռնակեղեմք, գլխաւի, կօշիկ	1.956	—	3.434	10
			37.967	—	ԴԱՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				
Գրքերու վաճառման արդիւնք	223	20	223	20	Գիրք, քույր, քարէս, գծագր. նիւթեր եւ այլն			1.935	20
Թոշակաւոր աշակերտներէ կանոնուած	14.724	—	14.724	—	ՈՒՏԵՍԻ ԾԱԽՔ				
Չբաժանուած երկու աշակերտաց հազուադէպ համար կանոնուած	364	—	364	—	Միջին բուով 22 ուսանողի համար			22.566	—
ՄԱՍԿԱՆՈՅ Պատ. Խնամակալութենէն ստացուած	7.280	—	7.280	—	ՋԱՆԱՋԱՆ ԾԱԽՔԵՐ				
			60.558	20	Լուսարար, բաղնիք, օճառ, սափիւն	1.154	30		
ՋԱՆԱՋԱՆԱՅ ՎՃԱՐԵԼԻ			251	—	Բժիշկ եւ դէպ	345	—		
					Հացի փուռ շինելու եւ հացագործի վարձ	241	30		
					Թղթակցութեան համար	525	10		
					Քարիւղ, փայտ, ածուխ	1.582	—		
					Պատահական ծառայութիւնք, փոխադրութիւնք, բանցարանացի, կլայեկի, ննակարկաւոր ծախքեր, ներկ, լուցիկ, նրագ, շիւ եւ այլն եւ այլն	1.485	—	5.333	30
					ԱՐՇԵՍԱՆՈՅ				
					Կօշակաւորութեան, գործիք, ապրանք եւ վարպետի վարձ	1.402	20		
					Դերձակութեան, գործիք, նոր համագրեւսի համար ապրանք եւ վարպետի վարձ	1.973	30		
					Անագագործութեան, գործիք, անագ եւ վարպետի վարձ	1.194	30	4.571	—
					ՊԱՇՏՈՆԷԻՑ ԹՈՇԱԿՆԵՐ				
					Տէր Ղեւոնդ հօր, 1 Մայիս — 31 Յուլիս	600			
					Պ. Ս. Պապանեանին, 1 Յունիս — 28 Փետրուար	3.276			
					Պ. Ս. Չեօղլեֆեանին, 10 Մայիս — 28 Փետրուար	2.639			
					Պ. Մ. Տէր Եղեկիւլեանին, 1 Յունիս — 30 Հոկտ.	2.002			
					Խոհարարին, 18 Մարտ — 28 Փետրուար	2.243			
					Տնտեսութեան, 1 Դեկտ. — 28 Փետրուար	216		10.976	—
			60.809	20				60.809	20

Քաղաքի Կրթական—Մշակութային խորհուրդին հաշուեկէշուն Պրն. Վ. Քիւրքեանի կողմէ Խորհրդոյ եւ իւր վարձի եւ պատճենից ամսականներու համար նշանակեալ գումարներու հաշուարկը ցուցուած գումարներն ալ նախատեսուած ակտներուն եւ տեղւոյ քննարկի զինքնուրոյն հետ քաղաքապետ Բախար եւ Հափաւոր, նոյն խի խնայողական նկատած լինելով, աս կը վստահացնենք: Ի պիմաց Թաղական Խորհրդոյ

18(30) Մարտ 1898, Նիկոսիա (Կիպրոս):

(Վերնիք Թաղ. Խորհրդոյ)

ԱՐԳԱՐ ԿԻՒՇԷՋԵԱՆ Ա. ԻԹԻՐԻՋԵԱՆ

ԱՏԵՆԱԳՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ի ՆԻԿՈՍԻԱ

Տեարք

Աբխազում Իւթիւճեան	Նախագահ
Աբղար Կիւլէզեան	Դանձապահ
Յարութիւն Մելիքեան	Անդամ
Վահան Քիւրքճեան	Քարտապահ



ՈՒՍԱՆՈՂՔ

Գ. ԴԱՍԱՐԱՆ	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ
1 Յարութիւն Էթմէքճեան	Քիլիս	Որը անթոշակ
2 Յակոբ Մէրտէնեան	Պէլլան	»
3 Դանիէլ Գարաժանուկեան	Այնթապ	»
4 Լուծֆիլ Գրքաբեկեան	Իսկէնտէրուն	Չքաւոր անթոշակ
5 Տօնապետ Թումաճանեան	Խարբերդ	Թոշակաւոր
6 Կարապետ Գունտապճեան	Անտիոք	»
7 Յովհաննէս Լէյլէկեան	Այնթապ	»
8 Սահիան Մարտիրոսեան	Ակն	»
9 Մովսէս Սուլթանեան	Նիկոսիա	Երթեւեկ

Բ. ԴԱՍԱՐԱՆ	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ
10 Ռաֆայէլ Փիլիպոսեան	Սողուլուզ	Որը անթոշակ
11 Պօլոս Ալեքսանեան	Մարաշ	»
12 Սեդրաք Աճէմեան	Տիարպէքիր	»

13 Յակոբ Շամլեան	Իսկէնտէրուն	Որը պաշտպանեալ
14 Տիգրան Թօփալեան	Կիւրին	Չքաւոր անթոշակ
15 Սահակ Սահակեան	Տարսն	»
16 Աղեքսանդր Շամլեան	Իսկէնտէրուն	Թոշակաւոր
17 Ռաֆայէլ	»	»
18 Արշակ Գալուստեան	Արարիկիր	»
19 Արմենակ Ալպոյաճեան	Կեսաբիա	Երթեւեկ
20 Յովհան. Բիւրլէզիլեան	Տիարպէքիր	»

Ա. ԴԱՍԱՐԱՆ	ՀԱՅՐԵՆԻՔ	ՎԻՃԱԿ
21 Յակոբ Ոսկիեան	Մարաշ	Որը անթոշակ
22 Գառապար Կարապետեան	Պաղչէ	»
23 Արմենակ Աթանասեան	Ատանա	»
24 Դուրիթ Վարդէլատեան	Մարաշ	»
25 Լեւոն Շալճեան	Տիարպէքիր	»
26 Քարգիս Պետրոսեան	Հատանպէյլի	Չքաւոր անթոշակ
27 Սեդրաք Պօլիկեան	Իսկէնտէրուն	Թոշակաւոր
28 Միսաք	»	»
29 Յովհաննէս Աղաժեան	Քէոպ	»
30 Գրիգոր Աղաճանեան	Արարիկիր	»
31 Յովսէփ Հէքիմեան	Տիարպէքիր	Երթեւեկ
32 Տիգրան Սուլթանեան	Նիկոսիա	»

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹՅՈՒՆՔ

Ի նոյսն հաստատուեալն միևեկ աշտօր ընդ
յուսնած նոյնեկերն մանրանաւորսն
նկերն աւակն եւ.

Ի ԼՈՂՏՈՂ

	ԱՆՊԷ. ՈՍՈՒ
Մեծ. Ն. Ներսէսեան	20
„ Հայ սմն	40
„ Տոբթ. Քալանթարեանց	5
„ „ „ (դարձեալ)	5
„ Հայ սմն	3
„ „ „ (դարձեալ)	3
„ Կ. Գրադէտեան	3
„ Մովսէս Ներսէսեան	2

Ի ԲԱՐԻՋ

	ՅԲԱՆՔ
Պատ. Կեղր. Միսթիւն Ի Բարիդ Լոնտոնէ Մեծ. Ներսէս Ներսէս Էանի միջոցաւ	500
Աղն. Տիկին Թաղար փաշա	300
Պատ. Բարեգործական ընկերութիւն	200
Մեծ. Ռ. Մարկոսեան	200
„ Յ. Յովսէփեան	450
„ Իշխան Գ. Լոսինեան	400

	ՅԲԱՆՔ
Մեծ. Յ. Իսկէնտէր	400
„ „ „ (դարձեալ)	50
„ Ա. Լեւոնյեան	400
„ Կ. Բէհիմեան	50
„ Թընկեր Եղբարք	40
„ Ի. Գ.	20
Երեք բարեւէր ազգայինք	30
Մեծ. Ա. Կիւրճեան	40
„ „ „ (դարձեալ)	40
„ Ղազարոս Եղբարք	20

Ի ՄԱՐՍԷՏԻ

	ՅԲԱՆՔ
Պատ. Նպատաւատոյց Յանձնա- ժողով	200
Մեծ. Էմիլ Լընուարի ձեռք	60
„ Յ. Սեւեան	50
„ Թէքէեան Եղբարք	50
„ Գ. Հայրումեան	50
„ Գ. Հեռուպոֆ	50

Ի ԳԱՀԻՐԷ

	ԱՆՊԷ. ՈՍՈՒ	ՇԵՒՆ
Վսեմ. Տիգրան փաշա Ապրօ	45.	6
„ Պօղոս „ Նուպար	40.	4
„ Եղբար „ Արթին	5	—
„ Հայ սմն	40	—

Մեծ. Պօղոս էֆ. Կարապետեան	ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻՄԼՆ	
(Հանգուցեալ)	3	—
„ Արիստակէս էֆ. Աղարեան		
(Հանգուցեալ)	3	—
Աղն. Տիկին Բըրլանդի Քըմբըմեան	4	—
Մեծ. Եագուպեան Եղբարք	3	—
„ Սեղբակ Դաւիթեան	2	—
„ Մովսէս Անանեանց	2	—
Աղն. Տիկին Մարի Ա. Պէրպէրեան	4	—
Մեծ. Մ. Մարկոսոֆ պէյ	4	—
„ Եռսուֆ Աղիզ պէյ	4	—
„ Տ. Սահակեան	4	—
„ Ս. Մելիքեան	—	46
„ Մ. Աղամ	—	40

ՅԱՂԱՔԱՆՆԳՐԻՄ.

ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻՄԼՆ

Վսեմ. Զեհոր պէյ Մէրամէթճեան	200
Մեծ. Հայկ Էքիզէր	400
„ Ալեքսան ճէփահիրճեան	400
„ Միհրան Գալֆաեան	400
„ Հայ ոմն	400
„ Գ. և Գ. Մելքոնեան	400
„ „ „ (դարձեալ)	96. 20
„ Զ. Սըվաղեան	40
„ Յ. Շնորհարեան	20

ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻՄԼՆ

Մեծ. Հայ ոմն	20
„ „ „	20
„ Ֆարհատ	20

Ի ՄԱՆՁԵՍԹԻ

ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԻՄԼՆ

Մեծ. Մարտիրոս Թոքատեան	40	—
„ Թօքալեան Եղբարք	20	—
„ Յովհաննէս Անդրէասեան	20	—
„ Ֆընտըքլեան Եղբարք	40	—
„ Ս. Եալաքճեան	40	—
„ Մ. Մանուկեան	40	—
„ Ս. Մանուկեան և որդիք	40	—
„ Ս. Եղիազարեան	40	—
„ Ս. Իբրէքճեան	40	—
„ Պ. Գրիգորիսեան	40	—
„ Մ. Աղնաւորեան	8	—

Արեւելեան վաճառականաց բնկերու-
թիւն 9. 44

Մեծ. Գրիգոր Ալքըճեան, և Թրանսփալ	— 40
„ Մարտիկ Փարայեան	— 40

Ի ՎԻԿՏՆԱ.

Մեծ. Գ. Ճերմակեան	2	—
-------------------	---	---

Ի ՆԻԿՈՍԻԱ. (Կիպրոս)

Անդրիայի Օր. Բաք	4	—
------------------	---	---

Ի ՆԵԿՈՍԻԱ (*)

ՊԱՏ. ԹԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ ԿՈՂՄԷ ԲԱՑՈՒԱԾ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

	ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԵԼԻՆ
Ս. Եկեղեցւոյ տնտուկէն	4 —
Մեծ. Աբխաղում Իւթիւճեան	4 —
Աղն. Տիկին Իւթիւճեան	— 40
Մեծ. Գառնիկ Սալմասեան	4 40
„ Հայ ոմն	4. 5
„ „ „	4. 4
„ Պօղոս Երամեան	4 —
„ Յարութիւն Մելիքեան	4 —
„ Հայ ոմն	4 —
„ Լեւոն Բարսեղեան	— 46
„ Ենովք ձիւճեան	— 40
„ Աբղար Կիւփէղեան	— 40
„ Հայ ոմն	— 40
„ Կարապետ Նիկողոսեան	— 5
„ Յակոբ Երամեան	— 3
„ Մինաս Գրիգորեան	— 3
„ Մադատ Տէփանեան	— 3
„ Յովհաննէս Աշճեան	— 3
„ Յարութիւն Եսայեան	— 4
Աղն. Տիկին Մարիամ Պէրկամալեան	— 3

(*) Այս հանգանակութիւն շարունակելի լինելուն համար ի հաշիւ առնուած չէ:

	ԱՆԳԼ. ՈՍԿԻ ՇԵԼԻՆ
Մեծ. Ալեքսան Հայրապետեան	— 3
„ Յակոբ Յովսէփեան	— 2
„ Հայ ոմն	— 2
„ Գէորգ Շահինեան	— 4
„ Զեհար Համբարձումեան	— 4
„ Հաճի Պետրոս Յակոբեան	— 4

ԱՅԼԵՒԱՅԻ ՆՈՒՎՐՆԵՐ

Արժ. Խորէն վարդապետ Փորթուղաբեան, նախկին Առաջնորդ Կիպրոսի. — Մեկ ոչխար, մեկ քօփ կտաւ:

Միացեալ ընկերութիւնք և Գրեհական յանձնաժողով Ազգ. Պատրիարքարանի ի Կ. Պօլիս. — Մեկ սևուկ զանազան դասագրքեր:

British and Foreign School Society ի Լոնտոն. — Աշխարհագրական և բնապատմական քարտեզներ, սևոյ. դասագրքեր և զծագրութեան առարկաներ (գումար արժեքն £ 11. 6):

Մեծ. Յովսէփ Իսկէնաէր, ի Բարիդ. — Մեկ օրինակ Այրարատ Հ. Արիւնի:

Աղն. Տիկին Յովհաննէ Կիւփէղեան, ի Նիկոսիա. — 66 քաշիկեան սպարգ և մեծախախտուն, 24 փողկապ.

Մեծ. Յակոբ Երամեան, ի Նիկոսիա. — Մեկ քօփ խաւս:

Մեծ. Մ. Մամուրեան, յ'Իզմիր. — Մեկ օրինակ Արեւելեան Մամուլ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ՄՈՒՏԲ

ՄԻՆՁԵՒ 28

ՓԵՏՐՈՒԱՐ 1898.

ԵԼԲ

	Անգլ. ոսկի	Շիլ.	Բլ.նի
1897 Օգոս. 30. — Տիար Քիւրքճեա ի մինչ ցարդ հաւաքած եւ Խնամակալութեանս ներկայացուցած հաշւոյն գումարը	270.	19.	10
	270.	19.	10
1897 Սեպտ. 1. — Խնամակալութեանս յանձնուած վերոյիշեալ հաշւոյն կշիւ գումարը	204.	9.	10
1898 Փետ. 28. — 1897 Սեպտ. 1է յետոյ Խնամակալութեանս հաւաքած նպատակներու գումարը Խնամակալութեանս ձեռք մի թոշակաւոր աշակերտի հաշւոյն ստացուած կիսամիսայ	152.	14.	7
1898 Փետ. 28. — Կիպրոսի մէջ թոշակաւորներէն եւ գրքերու վաճառումէն ստացուած գումարը 15311 1/2 դրուշ	84.	3.	—
1898 Փետ. 28. — Կիպրոսի մէջ ստացուած նպատակ Գանձարէն Տիկին Փ. Գրմգրմեանէ 4			
Անգլիացի Օր. Բաքէ	5.	—	—
	452.	7.	5

Մանչեսթր , 30 Ապրիլ 1898

	Անգլ. ոսկի	Շիլ.	Բլ.նի
1897 Օգոս. 30. — Նպատակ հանդանակելու համար Տիար Քիւրքճեանի Լքնաղն, Բարիզ, Մարտէյլ եւ Եգիպտոս կատարած 4 ամսեայ ճանապարհորդութեանց ծախքի	59.	5.	—
Որրոց համար փոխադրութիւն եւ այլ ծախք	7.	5.	—
1897 Օգոս. 30. Խնամակալութեանս յանձնուած	204.	9.	10
	270.	19.	10
1898 Փետ. 28. — Կրթարան—Որրանոցին կան հարասեայ եւ 11 1/2 ամսեայ ծախուց հաշիւը, Տիար Քիւրքճեանէ ներկայացուած եւ Կիպրոսի Ազգ. Թագ. Սորհրդոյ քննութեամբ վաւերացուած եւ կնքուած 60809 1/2 դրուշ	334.	2.	4
Կանոնադրոյ ապագրութեան, թղթի եւ այլ ծախքերու համար	5.	7.	6
1898 Փետ. 28. — Գանձապահ Տիար Ս. Եղիազարեանի քով պատրաստ գումար	112.	17.	7
	452.	7.	5

Ի զիմաց Խնամակալութեան

ՅՈՎՀ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Պատու ակադ. Բարսեղ վար

ՍՍԲԳԻՍ ԵՂԻՍԱՉԱՐԵԱՆ

Գանձապահ

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0050307

